

լոր երեւոյթներուն պատճառը. նորանոր վանկերու յաւելումը կը մղէ բառարմատը վերադառնալու իր հնադարեան սկզբնական վիճակին:

* * *

Ի՞նչ ուղղութեան պիտի հետեւի աշխարհաբար: Կարելի՞ է իսկոյն եզրակացնել որ թողունք արդի հոսանքը եւ դառնանք հինին: Ոչ: Հարկ է մեր ուսումնասիրութիւնը մանրամասնել նաեւ աշխարհաբարի հոգեբանութեան վրայ. վերլուծել ու քննել թէ ան որքան կը հեռանայ, կամ որքան հեռացած է զբարբէն. պըր-պըտել այդ հոսանքին պատճառները, անոր արդարացուցիչ սկզբունքները, յանգելու համար ողջամիտ եզրակացութեան:

Այդ մասը՝ յաջորդով:

Բայց ատկէ առաջ՝ փոքրիկ փակադիւծ մը:

Վերջերս վէճ մը ծագեցաւ երեսներորդ բառին վրայ. ոմանք կը պաշտպանէին երեսներորդ ձեւը, առանց սղումի, կամ գոնէ ներքին կը գտնէին ատոր դոյութիւնը աշխարհաբարի մէջ: Մենք հակառակեցանք առանց սղումի այդ ձեւին եւ ջանացինք պաշտպանել երեսներորդը իբր հարազատ եւ ուղիւ: «Բազմավիշ»ի մեր ընթերցողներուն ծանօթ է այս բոլորը իր մանրամասնութեամբ (տես 1959, էջ 109, 201, 220). արտասահմանի թերթերէն «Յառաջ» տուած էր խայծը (Սեպտ. 9, 11, 12), հետեւած էր վէճին ընթացքին եւ արձագանգած (1959, Դեկտ. 30, 31) առանց սակայն նորութիւն մը աւելցնելու մեր թերթին մէջ ըստածներուն վրայ:

Անկեղծօրէն կրնանք յայտարարել՝ թէ այդ բանավէճն էր որ առիթ տուաւ այս ուսումնասիրական փորձին. նախապէս, երբ երեսներորդի մասին կը գրէինք, մեր մտքին առջեւ արդէն իսկ ունէինք վերի բոլոր նկատողութիւնները, ու նաեւ ինչ որ տակաւին պիտի ներկայացնէք յաջորդաբար. եւ այդպիսի նկատողութիւններէ մղուած է որ եզրակացուցած էինք երեսներորդի հարադատութիւնը. բայց այս բոլորը անկարելի էր «ի սէր Մեծաւաճառ» վերադառնալու համետ սիւնակներուն մէջ ամփոփել. հետեւաբար որպէսզի մեր ընթերցողներն ալ ծանօթանան խնդրին բովանդակ ծանրութեան, եւ չըկարծուի թէ վէճը մասնակի բան մըն էր, այս ինչ կամ այն ինչ բառին մասին ծագած աննշան տարակարծութիւն մը, ուղեցինք լայնօրէն պարզել մեր տեսակէտը, ու ոչ միայն մեր անձնական տեսակէտը, այլ ներկայացնել նոյն ինքն իրական կացութիւնը, ջանալով իրազեկել՝ հայագիտութիւնը ժողովրդականացնելու մեր գլխաւոր նպատակը:

Թերեւս ոմանք կարծեն թէ այս անգամ մեր խորհրդածութիւնները կը յանդին ջատագովելու երեսներորդը. մեզի համար փակուած է այդ խնդիրը. ոչ ալ հիմա նպատակ ունինք քրքրել հինցած այդ վէճը. երեսներորդէն եւ երեսներորդէն շատ աւելի վեր ու շատ աւելի կարեւոր կը նկատենք ուսումնասիրական այս փորձը, որ այլեւս չի լճանար ճղճիմ վիճարանութեան մը նեղ սահմանին մէջ:

(Շարունակելի)

Հ. ՆԵՐՍԷՍ ՏԵՐ ՆԵՐՍԷՍԵԱՆ

ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ

ՄԱՅՏԱ Ա. ՄԸՆՏԻԿԵԱՆԻ


ԳԵՂԱՐՈՒԵՍԻ ՏԱՍՆԱՄԵԱԿԸ

Բեղուն տասնամեակ մը, որու ընթացքին՝ գոյն ու ցոլք սփռած է նկարչուհի Մայտա Ա. Մընտիկեան Նիւ Եորքէն մինչեւ Պոլիս, Զուիցերիա ու մանաւանդ Իտալիա. տարիներէ ի վեր զբաւած է ուղարկութիւնը հռչակաւոր քննադատներու, շահած է դափնեպսակներ, մեծ յաջողութեամբ մասնակցած է զեղարուեստական մրցանքներու (Premio La Colonna 1953, Premio Bollate 1958, Premio Viggini 1959), արժանացած է ոսկի մետալի՝ ճիշտ այս տասնամեակի կէսին, Վիարէճճոյի ցուցահանդէսին, նուիրուած՝ իտալական բնանկարի. տուած է բազմաթիւ անձնական ցուցահանդէսներ, Նիւ Եորք (1949), Պոլիս (1954), բայց մասնաւորապէս Իտալիոյ զանազան քաղաքներուն մէջ, ինչպէս Հռոմ, Լենիանոյ, Ռիմինի, գլխաւորապէս Միլան. մասնակցած է խմբական ցուցահանդէսներու (Famiglia Meneghina, Famiglia Artistica Milanese, Sindacato Artisti di Milano, Nazionale di Cesenatico, Mostra Indipendenti a Cadenabbia, a Milano). աւելի քան տասը տարիէ ի վեր անգամ է Նիւ Եորքի Արդի Արուեստի Թանգարանին (Museum of Modern Art), ինչպէս նաեւ Միլանի Գեղարուեստի Ընտանիքին (Famiglia Artistica Milanese), որու պաշտօնաթերթը Il Cardo մեծ խանդավառութեամբ կը մատնանչէ այս փայլուն տասնամեակը հետեւեալ տողերով (1960, Թ. 1, էջ 21).


«Հայ արեւելեան ծագումով այս նկարչուհին կը զգացնէ՝ գլխաւորապէս Պոլսոյ եւ Անատոլեան տեսարաններուն մէջ՝ իր

երկնաքնարերդակ ճաշակը, տաքուկ եւ խօսուն պաստառներով: Չանաղանեալ յուզականութեամբ՝ ըստ վայրերու փոփոխութեան՝ Մընտիկեան մերթ կը դառնայ զերազանցօրէն պարզունակ նկարչուհի, այնքան իրապաշտ: Ու մենք կը նախընտրենք զինքը այդպէս, իրականիմ զիմաց, ինչպէս երբ կը նկարէ Լոմպարտական բրնձաղաշտերը, հորիզոնին վրայ երկարող բարտինները, կամ ցուրտ բայց կայուն երկինք մը». այս տողերուն ստորագրած է նկարչութեան անուանի զեղադատ՝ Մարիոյ Փորթալուի:

Մայտա Ա. Մընտիկեանի մասին դըրուածներով հատոր մը կարելի է կազմել. սկիզբէն իսկ գնահատական, այսօր դարձած են զմայլանքի սիւնակներ. ձեռքիս տակ ունիմ ընտիր հաւաքածոյ մը, հարկաւոր կտրօններ, ուր դովեստներու տարափ մը կայ, զանազան լեզուներով. անգլիերէն, Ֆրանսերէն, իտալերէն, թուրքերէն. մեր հայ օրաթերթերն ալ,



ՄԱՅՏԱ Ա. ՄԸՆՏԻԿԵԱՆ - Լոմպարտական բրնձաղաշտեր:



ՄԱՅՏԱ Ա. ՄԸՆՏԻԿԵԱՆ - Պոլսոյ Ոսկեղջիւրը (1954)

Հայրենիք, Յուսարեր, Յառաջ, Մարմա-
րա, Ժամանակ, Ս. Փրկիչ, Քուլիս ատե-
նին բերած են իրենց տուրքը՝ արժանա-
վայել գովքն հիւսելով հայ նկարչուհիին
բարձր ու ազնուական ձիրքերուն:

«Բազմավեպ» 1954ին արդէն տուած է
արձագանգը Մընտիկեանի յաջողութիւն-
ներուն. հիմա ուրախ ենք տեսնելու եւ
գոհունակութեամբ շնորհաւորելու մեր
հայազարմ նկարչուհիին յաղթանակի սլը-
սակները:

Հազարաւոր այցելուներ որ կու գան Ս.
Հազար, ամէն ցեղէ ու երկրէ, մեր վանքի
հայկական նկարասրահին մէջ՝ Այվա-
գովսբէն, Բաշինջաղեանէն, Շահինէն,
Մախոխեանէն, Խաչատուրեանէն վերջ,
բազմաթիւ հայ արդի նկարիչներու շար-
քին՝ կը վայլեն նաեւ նկարչուհի Մայտա
Ա. Մընտիկեանի գոյներու շնորհքն ու
հրապուրդը. Աղբաւնեքուն Բրիտտոյր, Այ-
ցելու մանուկը, Ս. Փրանկիսկոսի բըռ-
չունները, Խափշիկի գլուխը, Փուգիանոյի
լիքը մշտապէս ցուցադրուած են հոն:

Վենետիկ իր միջադպարին երկամեայ
ցուցահանդէսներով կ'առնինքն աշխարհի

ամէն անկիւնէն արուեստագէտներ, որոնք
անպատճառ կ'այցելեն նաեւ Ս. Հազարու
թանգարանը. յաճախ կանգ կ'առնեն Մըն-
տիկեանի նկարներուն դիմաց, գնահա-
տանքի գեղեցիկ արտայայտութիւններով.
ատոնցմէ եղաւ վերջերս Երեւանի նկա-
րիչներէն՝ Յովհաննէս Զարդարեան (ո-
րու նկարները ցուցադրուած էին Վենե-
տիկի Երկամեային մէջ 1958ի ամառը),
եւ դեռ քանի մը օր առաջ՝ նոյնպէս Երե-
ւանէն այցելու՝ նկարչուհի Տիկ. Արփիկ
Նալբանդեան:

Այս տասնամեակի առթիւ, իտալական
մամուլը յաճախ ընդգծած է մընտիկեանի
հայ ծագումը եւ նշմարած է անոր մէջ
միշտ արեւելեան դիմ ու երանդաճաշակ:
Ինքն իսկ յայտարարած է թէ իր նկարնե-
րուն մէջ կայ իր հողին, պատրաստ ար-
ցունքի մը կամ ժպիտի: Մարիոյ Փորթա-
լուսի՝ զգացումի եւ բանաստեղծութեան
նկարներ որակած է Մընտիկեանի գործե-
րը, ինքնատիպ՝ ձեւով ու գոյնով:

Մայտա Ա. Մընտիկեան աշակերտած է
Ա. Քոլոմպոյի, որ արդի տպաւորապաշտ
զարդոյն է, իրապաշտ հակումներով:



ՄԱՅՏԱ Ա. ՄԸՆՏԻԿԵԱՆ - Porto Canale Leonardesco. Cesenatico.
Ոսկի մետալի արժանացած 1955ին (Premio Viareggio)


Հաղիւ աւարտած Միլանի Ա. Քոլոմպոյի
անուան Գեղարուեստից Վարժարանը,
անցած է Նիւ Եորք՝ մօտէն ուսումնասի-
րելու տպաւորապաշտ եւ արտայայտա-
պաշտ դպրոցի հեղինակները, Ամերիկեան
նկարչութեան յառաջագէտ ներկայացու-
ցիչները. իրրեւ հարադատ աշակերտ Քո-
լոմպոյի, ժառանգած է իրապաշտ դպրո-
ցի հակումներ, որ այնքան ալ բնական կը
բղիւին իր վրձինէն:

«Նուրբ է իր արուեստը - կը գրէ Nuovo
Corriere degli Artisti (Milano, 20. 5. 59)
- բնութիւնը հոն տեսնուած է ազնուօրէն
- բնութիւնը տրամադրութեամբ, եւ կա-
րանաստեղծ տրամադրութեան ներ-
քելի է ըսել՝ թէ այս նկարչուհիին ներ-
պատկերաւորումով, մերթ ընդ մերթ
կանգնած է՝ վարպետօրէն ցուցադրելու
բոլորէ մը հմայքը, կարծէք ժամանակէն
եւ անջրպետէն մեկուսացած: Մեղմ գոյ-

ները, տուներու անօրացած նիւթակա-
նութիւնը, ծովուն դաշն խօսակցութիւնը՝
կը մատնանշեն իսկական վերացումներ,
բայց նաեւ իրականութեան մէկ մեկամաղձ
նկատողութիւնը»:

Մարիոյ Փորթալուսի, ամփոփելով
Մայտա Ա. Մընտիկեանի տասնամեայ
գործունէութեան յաջողութիւնները,
1959ի ընթացքին Միլանի Հայ Տան մէջ
տեղի ունեցած ցուցահանդէսին առիթով՝
կ'ըսէ.

«Մայտա Մընտիկեանի ցուցահանդէսը
- նկարներ, ընդհանրապէս բացօթեայ աշ-
խատութիւններ, տեսարաններ, բնա-
նկարներ, մեկնաբանութիւններ - կը գու-
ղադիպի նկարչուհիին զեղարուեստական
տասնամեակին հետ. հետեւաբար ցուցա-
հանդէսը, թէ՛ նկարչուհիին համար եւ թէ
զինք մեծապէս գնահատող ու սիրող հան-
րութեան համար՝ առանձնայատուկ նը-



ՄԱՅՏԱ Ա. ՄԸՆԹԻԿԵԱՆ - խափշիկի գլուխ:
(Թանգարան Ս. Ղազարու)

չանակութիւն մը կ'առնէ, պատկերացնելով տասնամեայ ճիւղերու եւ երազներու իրադործումը, որոնց կատարին՝ անտարակոյս գեղեցիկ յաղթանակ մըն է որ կը նշմարենք: Եւ արդիւնքը ցայտուն է. Մայտա Ա. Մընտիկեանի արուեստը (նէ՛հայ է, հետեւաբար զաւակն է խելացի ցեղի մը, օժտուած հզօր կամքով եւ իրապաշտ հակումներով) դրական է եւ անկասկած կը բղխի նկարագրի եւ կամքի զօրեղ ձիրքերէ. ունի արդարեւ հաստատ զիծ մը, ուր կու գան ձուլուիլ արուեստի եւ աչքի տուրքերը, ինչ որ զերազանցօրէն ակնյայտ է, մանաւանդ իր վերջին գործերուն մէջ. նկարներ՝ լրջօրէն աշխատուած, հնարուած, ուսումնասիրուած, մտածուած: Մէկ խօսքով, գոհացուցիչ հասունութիւն մը կայ հոս՝ արտայայտութեան կերպերու. եւ ասիկա պտուղն է փորձառութեան մը. եւ անշուշտ գործնա-

կանօրէն նաեւ սկիզբն է՝ նկարչութիւն համար՝ արուեստի նոր շրջանի մը» (Il Cardo, Fam. Art. Mil. 1959, n° 5-6, pg. 43):

Մայտա Ա. Մընտիկեանի վերջին գործերէն մէկն է, Թարմ իւզով, Քրիստոսի խաչելութիւնը (մեծ. 100×150), գըծուած Միլանի Հայ եկեղեցւոյն համար. արուեստի կատարեալ գործ մը արդարեւ. զգացումի եւ գոյներու զերազանց արտայայտութեամբ:

Մենք կը մաղթենք տակաւին նորանոր յաղթանակներ մեր ազնիւ նկարչութիւն: Մաղթանքին հետ բաղձանք մըն ալ ունինք. բաղձանք մը՝ որուն իրադործումը անշուշտ պիտի դայ լրացնել Մընտիկեանի տարիներու երազը: Իր քննադատները միշտ կը մատնանշեն հայ ծագումը եւ նոյնը կը նշմարեն իր նկարներուն ընդմէջէն. բայց ատոնք մեծ մասով Իտալական միջավայրէն ներշնչուած կտորներ են. Պոլսոյ այցելութեան առթիւ է որ, կը կարծենք, արեւելեան գոյնը աւելի եւս փայլեցաւ: Մենք կը բաղձանք որ Մայտա Մընտիկեանի եւս ժպտի բախտը, այցելելու Հայաստան, մօտէն ծանօթանալու Երեւանի նկարչութեան Գեղարուեստի Հաստատութեան վարչութեան հետ, հայ նկարիչներուն հետ, տեսնելու հայրենի երկրին իսկական գոյներն ու ցոլքերը, ներշնչուելու համար հայ հարազատ բնանկարով, Մասիսներու վերջալոյսի բոսորով, Երասխի յորձանքներով, Սեւանի ծփանքներով, Արարատեան դաշտի չքնաղ ծաղիկներով:

Կը մաղթենք որ իրականանայ այդ՝ առաջիկայ տասնամեակի արշալոյսին իսկ: Վստահ ենք թէ անկէ վերջ, ո'չ միայն հայ նկարագրին ու կամքն է որ պիտի ցոլան Մընտիկեանի նկարներուն մէջէն, այլ նաեւ հայ բնիկ երանդները, Արարատի նման՝ յաւերժութեան դադանիքով առլցուն:

Հ. ՆԵՐՍԷՍ ՏԵՐ ՆԵՐՍԷՍԵԱՆ

Վ Ա Ն Ք

Վա՛նք, ուրկէ ես օր մը անցայ դեռահասակ,
Երբ կեանքը դեռ խոստումներով էր պսպղուն,
Պիտ'ուզէի կամարներուդ երկնքին տակ
Վերադառնել հին կախարդանքն երազներուն:

Հիւսել հոգւոյս վառ ճաճանչները ոսկեղէն՝
Որոնցմով սէրը ծաղկեցաւ ինծի համար,
Եւ դեռ յղկել ձիւնամարմին քարը մարմար
Հանուած Յոյսի խորախորհուրդ ընդերքներէն:

Պիտ'ըլլայի ես արեղայ մը դալկահար,
Բայց վիշապները սուրբերէն զիս խըլեցին,
Պարուրեցին պատմութեանով մը բոցավառ...

Հիմա կու գամ ըստուերիդ մէջ աղօթմամբ
Յիշել, որ սիրտս էի երբեմն ընծայած
Անմեղութեան լուսահեղեղ պատարագին...

Կ Ա Մ Ա Ր

Յաղթանակի: Բայց մահուան մեծ խորհուրդին տակ՝
Որ ինքն ալ միշտ կամար մըն է գիշերական,
Մարմարահիւս քանդակներով շերտեր կան,
Ուր լըռութիւնն է քարացիք անյիշատակ:

Ո'չ մէկ անուն. ո'չ մէկ լուսեղ թըւանըջան.
Սըկի՛ մը լոկ՝ ուր կ'ըմպէ օձ մը դալարուն.
Կը սեւեռի շուրջը հսկող զիմակներուն
Մութ կերպարանք մը տանջանքով թախանձական:

Եթէ ննջող մը արթննար եւ անցեալին
Գաղտնիքն ըսէր, երբ Սիրոյ, Ատելութեան...
Բայց գերեզմանը կնքըւած է յաւիտեան.

Երբ հոն չըթները որդնահար դեռ կ'արիւնին,
Անոնց երգումը մըրընչող՝ Յաղթանակի
Չայն մը յանկարծ ահեղօրէն կը փոթորկի...

ԱՐՄԷՆ ԵՐԿԱԹ